ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան, Գ.Նժդեհի 11, հեռ.՝ (+374 10) 440 601, էլ.փոստ՝ yerevan12@schools.am

№ 04

« 09 »հունվար 2024թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Տեղեկացնում եմ Ձեզ,որ 09.01.2024թ. Երևանի «Վ.Համբարձումյանի անվան հ.12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցչի թափուր տեղեր:

Խնդրում ենք տվյալ հայտարարությունը տեղադրել ԿԳՄՍ պաշտոնական էջի հայտարարությունների բաժնում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԹԵՐԵԶԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Մրցույթ՝ «Երևանի Վ.Համբարձումյանի անվան հ. 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոլոգիա» (11 դասաժամ), «Կերպարվեստ» (25 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հունվարի 10-ից մինչև 2024թ. հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. հունվարի 26-ին՝ ժամը 13:00-ին**, Երևանի Վ.Համբարձումյանի անվան հ.12 հիմնական դպրոցում: Հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 11: Տեղեկությունների համար զանգահարել (**010) 440601** հեռախոսահամարով: